ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 217 -Ա ք.Արտաշատ

„15" հուլիսի 2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ «ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ» ԹԵՄԱՅՈՎ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N46-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետով և 18-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Արարատի մարզպետի 2026 թվականի փետրվարի 3-ի 57-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ Արարատի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2026 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 6.1 կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2026 թվականի հուլիսի 24-ին՝ ՀՀ Արարատի մարզում անցկացնել «Համաճարակի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ՇՈՒ):

2. ՇՈՒ նախապատրաստման և անցկացման նպատակով նշանակել՝

1) ՇՈՒ ղեկավար՝ ՀՀ Արարատի մարզպետ Սեդրակ Թևոնյանին.

2) ՇՈՒ ղեկավարի տեղակալ՝ ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Վլադիմիր Խաչատրյանին.

3) ՇՈՒ ղեկավարման շտաբի պետ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) Արարատի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) պետ, փրկարարական ծառայության (այսուհետ՝ փ/ծ) գնդապետ Կարեն Ավետիսյանին.

3. Ստեղծել ՇՈՒ ղեկավարման շտաբ՝ հետևյալ կազմով՝

1) **խաղարկման խումբ.**

ա.խմբի ղեկավար-ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի պետ, փ/ծ կապիտան Հռիփսիմե Հարությունի Պետրոսյան.

բ. խմբի անդամ-ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Գարիկ Պողոսի Չամուրյան.

գ. խմբի անդամ-ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Լևոն Ռաֆիկի Ավետիսյան.

դ. խմբի անդամ-ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ մասնագետ Հարություն Վոլոդյայի Կարապետյան.

ե. խմբի անդամ-ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ մասնագետ Նելլի Արտուշի Թորոսյան.

2) **վերլուծության խումբ.**

ա. խմբի ղեկավար-ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Գրիգոր Խաչիկի Եփրեմյան.

բ. խմբի անդամ-ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Տաթևիկ Գրիգորի Գրիգորյան.

գ. խմբի անդամ-ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Հարություն Ազատի Մայիլյան.

4. Շտաբային ուսումնավարժությանն ընդգրկել՝

1) ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի հետևյալ վարչությունների ղեկավար կազմերին՝

ա) Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն,

բ) ֆինանսական վարչություն,

գ) Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն,

դ) Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն,

ե) Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն

2) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ-ը.

3) ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Արտաշատի գումարտակին.

4) ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) «Արարատ» մասնաճյուղին.

5) «Դալարի առողջության առաջնային պահպահման կենտրոն» (Բերքանուշի ԲՄԿ) ՊՈԱԿ-ին.

6) «Մրգավանի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը.

7) ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնին (Արարատ).

8) «Արտաշատ բժշկական կենտրոն» (Արտաշատի պոլիկլինիկա) փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ՓԲԸ).

9) ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական շտապօգնության ծառայության ՓԲԸ շտապօգնության բրիգադներ.

10) Արտաշատ համայնքի ղեկավարին, Արտաշատ համայնքի Դալար, Մրգավան և Բերքանուշ բնակավայրերի վարչական ղեկավարներին:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) մինչև 2026 թվականի հունիսի 11-ը կազմել և իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի փաթեթը.

2) համաձայն ուսումնավարժության օրացուցային պլանի՝ կազմակերպել միջոցառման մասնակիցների նախապատրաստումը՝ մասնակիցներին ցուցաբերելով անհրաժեշտ մեթոդական օգնություն.

3) 2026 թվականի հունիսի 17-ին զեկուցել ուսումնավարժության անցկացման պատրաստականության մասին:

6. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) ուսումնասիրել՝ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Հանրային առողջության մասին» ՀՀ օրենքները և ՀՀ կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 18-ի №1337-Լ «Համաճարակի և համավարակի պատրաստվածության և արձագանքման պլանը հաստատելու մասին» որոշումը:

2) ուսումնավարժության ընթացքում իրականացված միջոցառումների մասին ներկայացնել համապատասխան զեկույցներ:

7. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Արարատի մարզպետի տեղակալ Վլադիմիր Խաչատրյանին

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

6/15/2026

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**